

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

Վարդան Հայկազյան

Ներածություն

Հայաստանը (ներառյալ ԼՂՀ-ն) շուրջ 40 հազար կմ² ընդհանուր մակերես ունեցող լեռնային երկիր է Հարավային Կովկասում: Այդ տարածքի կեսից ավելին պիտանի չէ գյուղատնտեսություն վարելու համար: Տարածքի մեծ մասն ամփոփված է 1000 և 2500 մետր բարձրությունների միջև (կամ այլ կերպ՝ տարածքի մոտ 90%-ը գտնվում է ծովի մակերևույթից ավելի քան 1000 մետր բարձրության վրա) և ունի 6 և ավելի աստիճան թեքություն: ՀՀ գյուղատնտեսությունը ծավալվում է 14 հազար կմ²-ից (1392 հազար հեկտար) պակաս հողատարածության վրա, որից 520 հազար հեկտարը (37.3%) վարելահողեր են, մոտ 40 հազար հեկտարը (2.9%)՝ բազմամյա տնկարկներ, 143 հազար հեկտարը (10.3%) կազմում են խոտհարքները և 689 հազար հեկտարը (49.5%)՝ արոտավայրերը:

Միջին տարեկան տեղումները տատանվում են 250 մմ՝ հարավում և 450 մմ՝ հյուսիսում արժեքների շուրջ:

Սուր կլիման ցերեկային առավելագույն և գիշերային նվազագույն ջերմաստիճանների տարբերությունը հասցնում է զգալի չափերի, ինչը հողի հարուստ միկրոտարրային կազմի հետ միասին ապահովում է բույսերում երկրորդային սինթեզի նյութերի բուռն առաջացումը, որով և պայմանավորվում են հայկական մրգերի և բանջարեղենի բարձր համային հատկանիշները [1]: Վերջիններիս լայն օգտագործումը թե՛ թարմ, թե՛ պահածոյացված վիճակում պայմանավորված է ինչպես էթնոպատմական, այնպես էլ սոցիո-կլիմայական առանձնահատկություններով:

Վերջին մեկ և կես տասնամյակում հանրապետությունում մի քանի անգամ աճել են հացահատիկի, հիմնականում աշնանացան ցորենի և գարնանացան գարու տարածքները: Կերային մշակաբույսերի երբեմնի հարուստ ցանկն այժմ ներկայացված է միայն առվույտով և կորնզանով:

Լեռնային շրջաններում վեգետացիան տևում է 4, նախալեռնային շրջաններում՝ 5, իսկ հարթավայրային գոտում՝ 6 ամիս: Օգտագործելով թաղանթային ծածկույթներ, մասնակի ջեռուցում, նաև կիրառելով մտածված պտղափոխություն՝ Արարատյան հարթավայրում ևս 1-2 ամսով երկարացվում է վեգետացիոն շրջանը, և մեկ տարում 3 բերք են ստանում (օրինակ, թաղանթի տակ ստանում են սեղանի կանաչի և սալաթային մշակաբույսեր, ապա բանջարեղեն կամ վաղահաս կարտոֆիլ, եգիպտացորեն և, վերջապես, աշնանացան ցորեն):

Մշակվող կուլտուրաների ցանկն անցնում է 50-ից, բնության մեջ հանդիպողների՝ 6500-ից: Դրանցից մոտ 300-ը ուտելի բույսեր և դեղաբույսեր են, որոնք հավաքվում են բնակչության կողմից և օգտագործվում, կազմելով սպառվող սննդի 10-15%-ը [2]: Քանի որ նշված բույսերի զգալի մասը էնդեմիկ է և նրանց մեջ հանդիպում են նաև անհետացող բույսեր, փորձեր են արվում (ցավոք, պետական հովանավորության հետ չառնչվող) դրանք բազմացնելու ֆերմերական տնտեսություններում, որից և՛ ֆերմերի եկամուտը կաճի, և՛ բնական պաշարները կպահպանվեն:

Թերևս Հայաստանի և նրա գյուղատնտեսության համար ամենաբնորոշը ուղղահայաց գոտիականությունն է: Կլիմայական պայմանների փոփոխությունը տարբեր բարձրություններում մի շարք առավելություններ է ստեղծում, որոնցից ամենակարևորը դիվերսիֆիկացումն է՝ գյուղատնտեսության համար և կենսաբազմազանության պահպանման հնարավորությունը՝ բնապահպանության և էկոլոգիայի համար: Օրինակ, ծիրանը, որի բերքատվության տևողությունը մի վայրում 10-15 օր է, հանրապետության շուկաներում գոյություն ունի 100-105 օր: Հասկանալի է, որ արտահանման ժամկետները նույնպես այդչափ ընդլայնված են: Դիվերսիֆի-


կացման ևս մեկ վառ օրինակ է գյուղատնտեսական տեխնիկայի, հատկապես կոմբայնների սակավության պայմաններում, միևնույն մեքենայի բազմիցս օգտագործման հնարավորությունը. հացահատիկահավաք կոմբայնները հուլիսին նախալեռնային շրջաններից իջնում են հարթավայր, կատարում բերքահավաքը, իսկ օգոստոսին հարթավայրայինների հետ բարձրանում են նախալեռնային և լեռնային շրջաններ:

Նույն ուղղահայաց գոտիականությունը բարենպաստ պայմաններ է ստեղծում նաև մեղվաբուծության համար: Դրան նպաստում են, մի կողմից, տաք և երկարատև ամառը, մյուս կողմից՝ ծաղկող պտղատու այգիների, կերային մշակաբույսերի, ինչպես նաև ծաղկաշատ մարգագետինների ու արոտավայրերի առկայությունը: Սակայն մասնագետների վկայությամբ՝ նույն կլիմայական և բնառեսուրսային պայմաններն ավելի նպաստավոր են մեղվաբազմացման, քան մեղրի արտադրության համար:

Ինչ վերաբերում է գյուղատնտեսական ոլորտի ընդհանուր բնութագրմանը, կարելի է ասել, որ չնայած ռեֆորմներն ընթանում են, բնագավառի խնդիրները մնում են չլուծված: Տնտեսությունների մեծամասնությունը բնությո՞վ մնում է բնամթերային, իսկ կանոնավոր կերպով շուկա դուրս գալու հնարավորություն ունեցող մի քանի հազար տնտեսություններ կարողացել են ստեղծել գյուղատնտեսական մթերքների ընդլայնված արտադրություն հիմնականում այլ ոլորտներում ձևավորված կապիտալի ներդրումով:

Գյուղմթերքի արտադրման համակարգի բարելավումը պահանջում է հուսալի գործող վերամշակում, վարկեր և ապահովագրություն, շուկաների նկատմամբ ճիշտ կողմնորոշում, տեխնիկական և խորհրդատվական օգնություն: Վերջինս չնայած արդեն 10 տարուց ավելի գործում է հանրապետությունում, բայց այդպես էլ չի գտել կենսական դառնալու մեխանիզմներ և կարողանում է գոյությունը պահպանել միայն միջազգային կազմակերպությունների աջակցության շնորհիվ:

Ընդհանուր առմամբ այսօր Հայաստանում մարդկային ռեսուրսը ծավալվում է մի տիրույթում, որտեղ տնտեսական, էկոլոգիական և սոցիալական ոլորտները բնութագրվում են ընդգծված դիվերգենցիայով (տե՛ս նկ.1):



Նկ. 1. Տնտեսական, էկոլոգիական և սոցիալական ոլորտների դիվերգենցիա (տարամիտում)՝ զարգացող և անցումային երկրների համար (ա) և կոնվերգենցիա (համամիտում)՝ հետանցումային և զարգացած երկրների համար (բ):

Այնուամենայնիվ, ինչ-որ առաջխաղացում նկատելի է՝ պայմանավորված հիմնականում ազգային ադապտացիոն կարողությունների և ներուժի, ինչպես նաև մի շարք միջազգային կազմակերպությունների աջակցությամբ և աննշան չափով միայն պետական կառույցների մտածված քաղաքականությամբ: Դա է պատճառը, որ բնագավառի իրական կամ թվացյալ հաջողությունները թվարկելիս, ներկայացվում են բերքատվության թվեր, որոնք լավագույն դեպքում կազմում են տվյալ ագրոէկոլոգիական համակարգով պայմանավորված բերքի 40-50% -ը:

Հիմնախնդիրներ և խոչընդոտներ

Հոդք: Յուրաքանչյուր երկրում գոյություն ունի գյուղացիական տնտեսության օպտիմալ չափ և դրա հետ կապված հողհանդակների օպտիմալ շահագործում:

Համակենտրոնացման ճամբարի սկզբունքով հացի քիչ թե շատ հավասար, բայց շատ փոքր կտորների բաժանված հանդակները առավել նվազեցին կոմունիկացիաների անցկացման և անարդյունավետ ոռոգման, իսկ հետագայում նաև՝ սխալ հերկի հետևանքով (տե՛ս հաջորդիվ):

Նախկին 869 կոլեկտիվ և պետական տնտեսությունները ծավալված էին 147 000 առանձին հողհանդակների վրա: Պետք էր դրանք պահպանել՝ մրցութային կարգով տրամադրելով առանձին լոթերով՝ տարբերություն դնելով գյուղի աշխատավորի և գյուղաբնակի միջև, այլ ոչ թե բաժանել մոտ միլիոն կտորների (այսօր գոյություն ունեցող գյուղացիական 336 000 տնտեսություններից յուրաքանչյուրին հող է հատկացվել մի քանի տեղ): Սխալ գործողություններ կատարել, հիմնավորելով, որ այլ կերպ «դժգոհություն կառաջանար», տվյալ դեպքում միանգամայն անհիմն է, քանի որ մեր առաջադրած տարբերակում էթե դժգոհություն առաջանար էլ, դժվար թե գերազանցեր այսօրվա օրեցօր աճող անբավարարվածության զգացումը: Փոխարենը խնդիրն արդեն ճիշտ լուծում ստացած կլիներ:

Հանրապետությունում գյուղացիական տնտեսության միջին չափը հավասար է 1.37 հա և տատանվում է 0.61 հա Արարատյան հարթավայրում և 3.0 հա նախալեռնային ու լեռնային շրջանների համար: Միջին հաշվով 3 կտոր կազմող տնտեսության հողատարածքի մեկ կտորը ոռոգելի է, երկուսը՝ ոչ: Տնտեսությունների 88%-ը ավելի փոքր է, քան 2 հա-ն և զբաղեցնում է վարելահողերի 77%-ը: Տնտեսությունների 12%-ը ավելի մեծ է, քան 2 հա-ն և զբաղեցնում է վարելահողերի 23%-ը: Տնտեսությունների մոտ 15%-ում մշակում են նաև վարձակալած հողեր, միջինը 3.2 հեկտարի չափով, իսկ 30%-ում չեն մշակում մասամբ կամ ամբողջապես՝ հողերի վատ որակի, ջրի կամ միջոցների բացակայության, տնից հեռու գտնվելու պատճառով:

Հայաստանի մակերեսի մոտ կեսը լավային առաջացումներ են՝ առանց կամ գրեթե առանց հողածածկի: Մյուս կեսը լեռնային մարգագետնային, շագանակագույն, անտառային դարչնագույն, կարբոնատային, կիսաանապատային և լեռնային

սևահողեր են: Ոչ ճիշտ ագրոտեխնիկայի կիրառման և հողապաշտպան միջոցառումների բացակայության պատճառով բոլոր հողերը այս կամ այն չափով վնասված են հումուսային շերտի աղքատացման, քամու և ոռոգման էրոզիայի, աղակալման հետևանքով: Հատկապես թեքությունների վրա գտնվող հողակտորների՝ մեծ տոկոս կազմելու պարագայում միանգամայն անթույլատրելի է լանջին ուղղահայաց ակոսներով վար կատարելը, ինչը տեղի է ունենում գրեթե ամենուրեք, և դրա նախապայմանն է սխալ կատարված հողհատկացումը [3]:

Անտառածածկույթը հանրապետությունում 15 տարի առաջ կազմում էր 11%: Այժմ, երբ նշված տարիների ընթացքում, սկզբում՝ էներգետիկ ճգնաժամի, իսկ ապա ուղղակի հանցավոր շահագործման պատճառով շատ ծառեր կտրվեցին՝ 6%: Նույն էներգետիկ ճգնաժամի պատճառով վերջին 15 տարիներին հողերը չնչին քանակներով են հարստացվել կոմպոստով կամ գոմաղբով, որը էներգետիկ ռեսուրսներով աղքատ Հայաստանում ավանդաբար օգտագործվել է, չորացած վիճակում, որպես վառելանյութ գյուղական վայրերում:

Ինչ վերաբերում է արդյունաբերական եղանակով ստացվող պարարտանյութերին, Հայաստանը նախկինում արտադրում էր բավական չափով ազոտ պարունակող պարարտանյութ (կարբամիդ), նաև ներկրում էր ազոտ, կալիում և ֆոսֆոր պարունակող պարարտանյութեր երկաթգծով: Այժմ կարբամիդ Հայաստանում չի արտադրվում, փոխարենը Վրաստանից ներկրվում է ոչ բարձրորակ ազոտական սելիտրա: Երկաթգիծը գրեթե չի գործում՝ տարածաշրջանի բարդ քաղաքական իրավիճակի պատճառով: Դրա հետևանքով չեն ներկրվում K և P: Եվ եթե երկրի հողերը և ջուրը որոշ աշխարհագրական տարածքներում հարուստ են կալիումով, ապա ֆոսֆորական պարարտանյութերի վերջին տարիների բացակայությունը բերել է այնպիսի դեֆիցիտի, որով վտանգվում է գյուղատնտեսական կենդանիների ոսկրակազմի նորմալ ձևավորումը:

Ոռոգում: Հանրապետությունում ոռոգվում է ոչ ավելի, քան 200 հազար հա տարածություն, այն էլ շատ ցածր արդյունավետությամբ: Նախկինում, երբ գործում էր Խորհրդային Միության էներգետիկ համակարգը՝ էլեկտրաէներգիայի չափազանց ցածր գներով, ոռոգման հայեցակարգն այն էր, որ միշտ կարելի էր ջրաբեխցմանը մասնակցած կամ չմասնակցած, բայց արդեն ներքին կետում հայտնված ջուրը նորից մղել վերև և կատարել ոռոգում:

Բացի այդ, չնայած վերջին 10-15 տարում անընդհատ փոփոխվել են սակագները և փորձարկվել ոռոգման կառավարման տարբերակներ (օրինակ, ոռոգման համակարգի տարբեր հատվածների համար սուբյեկտների պատասխանատվության բաշխումը), համակարգը չի օպտիմալացվել, քանի որ փոփոխությունները կրել են հախուռն բնույթ և ոչ թե եղել վերլուծությունների, լայն քննարկումների և մասնակցային սկզբունքով որոշումների ընդունման արդյունք:

Սրան ավելացնենք ոռոգման համակարգի տեխնիկական անմխիթար վիճակը և նոր տեխնոլոգիաների իսպառ անտեսումը, որի պատճառով ջրի կեսից ավելին կորչում է մինչև դաշտ հասնելը, որտեղ էլ այն օգտագործվում է նույնպես 50 %-ից պակաս արդյունավետությամբ:

Կրթություն, խորհրդատվություն, գիտություն, վերապատրաստում: Գյուղատնտեսական կրթական համակարգի կոնտինգենտը հիմնականում քաղաքաբնակ է, որի չնչին տոկոսն է միայն ավարտելուց հետո աշխատում ըստ մասնագիտության:

Գիտական համակարգը կատարյալ կոլապսի մեջ է: Պետական չնչին և պատահական դրամաշնորհային ֆինանսավորումն ի վիճակի չէ արդյունավետորեն ծառայեցնել գյուղատնտեսական գիտությունը գյուղատնտեսական արտադրությանը: Թույլ է կրթության, գիտության և արտադրության փոխադարձ կապը, հատկապես գյուղակադեմիայի՝ վերջերս գյուղնախարարության ենթակայությունից դուրս գալուց հետո (փոխանակ ինտեգրվել գյուղատնտեսական գիտության հետ): Գյուղատնտեսության ինտելեկտուալ դաշտը խիստ տրոհված է:

Խորհրդատվությունն իր գոյության ավելի քան 10 տարիներին անշուշտ ունեցավ իր դրական դերակատարությունը: Սակայն մինչև հիմա գոյությունը պահպանել է *USDA* և *WB* միջոցներով: Այսուհետ գոյատևելու համար այն պետք է սնվի ֆերմերների վճարումներից, ինչը ֆերմերի անվճարունակ լինելու պատճառով մոտ ապագայում ռեալ չէ, կամ պետական ֆինանսավորումից, որն ավելի քիչ հավանական է:

Նախկինում գոյություն ունեցող վերապատրաստման համակարգը գրեթե գոյություն չունի, և դրա համար տարիներ առաջ գյուղատնտեսական կրթություն ստացած գյուղաբնակ մասնագետները չեն կարող անհրաժեշտ չափով պիտանի լինել իրենց համայնքներին: Բացառություն է կազմում նրանց այն չնչին տոկոսը, որը ժամանակին ընդգրկված է եղել խորհրդատվական համակարգում և, հետևաբար, մասնակցել է անձնակազմի պարբերաբար անցկացվող ուսուցմանը:

Վերամշակում: Հայկական վերամշակող ձեռնարկությունները տարիներ շարունակ ինչպես ներսի, այնպես էլ դրսի շուկաների համար արտադրել են բարձրորակ հյութեր, ջեմեր և մուրաբաներ, տոմատի մածուկ, թթուներ և մարինադներ: Համաշխարհային համբավ ունեն հայկական միրգն ու բանջարը և նրանցից ստացված պահածոները: Շուրջ 10 տարի նախկին շուկաների կորստի և ոչ ժամանակակից սարքավորումներով հագեցած լինելու պատճառով այդ բնագավառը անգործության էր մատնված: Միայն 1997-ից վերամշակող ձեռնարկությունները սկսեցին գործել, սկզբում՝ իրենց կարողությունների 5-10%-ով, ապա՝ թափ հավաքելով և ընդլայնելով արտադրական ծավալները:

Բացի ֆերմեր-վերամշակող հարաբերությունների անկատարությունից, նոր շուկաների որոնումներից, արտոնագրման համակարգի անկատարությունից, որն ի վերջո խոչընդոտում է պատրաստի ապրանքի արտահանումը, կան նաև զուտ տեխնիկական խոչընդոտներ, որոնց վերացումից հավանաբար և պետք է սկսել բնագավառի առողջացումը.

ա) վերամշակող ձեռնարկությունների ընդունման կետերի մթերքի որակավորման անալիզների ոչ ադեկվատ լինելը. իհարկե, ի վնաս ֆերմերի

բ) ընդունված ապրանքի դիմաց վճարման պարտավորությունների ուշացած կատարումը:

Այլ խոչընդոտներ: Դաշտային գյուղատնտեսական տեխնիկայով ապահովվածությունը կազմում է հազիվ 10%, իսկ տեխնիկայի միջին «հասակը»՝ 20-25 տարեկան: Ընդ որում, եթե այդ «հասակի» տրակտորը լավ խնամքի դեպքում դեռ բավարար է ծառայում տիրոջը, նույնը չի կարելի ասել կոմբայնների մասին. պահեստամասերի բացակայության հետևանքով բերքի կորուստը հասնում է 30%-ի: Ավելի վատ վիճակում է անասնապահական համալիրի հագեցվածությունը տեխնիկայով (գոմերի մաքրում, կթում, կաթի պահեստավորում, մշակում, տեղափոխում): Վերջին տարիներին փոքր-ինչ բարելավվել է գյուղատնտեսական մթերքների վերամշակման տեխնիկական հագեցվածությունը:

Ուշ գարնանային և շատ անգամ վաղ ամառային ցրտահարությունները, կարկուտը, հաճախ պատահող չորային տարիները գյուղատնտեսությունն վարելու համար Հայաստանը դարձնում են ռիսկային գոտի:

Կոռպերացիան պարզապես փրկություն կհանդիսանար երկրի գյուղատնտեսության համար՝ լուծելով այդ բազմագործոն համակարգի խնդիրների մեծ մասը: Սակայն կոռպերացիայի այն ձևը, որին ականատես և մասնակից է եղել հայ գյուղացին անցած դարի 70-80-ական թթ. ընթացքում, վարկաբեկում է այդ կարևոր սոցիալական միջոցառումը:

Մյուս կողմից, որքան էլ կոռպերացիան նպաստի գյուղատնտեսության զարգացմանը, հատկապես հողահանդակների խոշորացման, բարձր բերք ստանալու, այն վերամշակելու և իրացնելու հարցում, կա մի շատ կարևոր հանգամանք ևս, որի լուծումը եթե մենք այսօր չունենանք, վաղը նեթ ականատես կլինենք լուրջ սոցիալական լարվածության: Այժմ հանրապետության բնակչության մոտ կեսը զբաղված

է գյուղատնտեսությունում: Հարկավ, դա անբնական է. դժվար թե նրանք բոլորը հենց ֆերմեր են: Բայց ծայր առած հողի վաճառքը զարգացում չի ապրում նաև այն պատճառով, որ անգամ ինքն իրեն ֆերմեր չճանաչող գյուղացին այլ աշխատատեղ չունենալու պատճառով մնում է հողին կառչած՝ որպես գոյության պահպանման միակ միջոցի: Մի խոսքով՝ զարգացումն արգելափակված է:

Պետական մարմինների կողմից գյուղատնտեսության նկատմամբ ամբողջական ծրագրային մոտեցում չի ցուցաբերվում: Միակ բանը, որ գյուղնախարարությունն անում է, արտասահմանյան դրամաշնորհների տնօրինումն է՝ առանց գյուղացու հետ հաշվի նստելու և գյուղատնտեսության հետ առնչվող կազմակերպությունների կարծիքը հաշվի առնելու: Առ այսօր լուծված չէ երկրի ո՛չ ագրարային քաղաքականության խնդիրը, ո՛չ էլ պարենային անվտանգության հարցը:

Ընդհանուր առմամբ, Հայաստանի գյուղատնտեսությունում ծառացած հիմնախնդիրները արտահայտում են անցումային շրջանի առանձնահատկությունները և շուկայական տնտեսության անցնելու դժվարությունները:

Առաջընթացի հնարավորություններ

Հողի որակի և կառավարման բարելավում: Իրավիճակը բարելավելու լավագույն տարբերակը կլինե՞ր թերևս այն, որ պարարտանյութերի ներկրման դժվարություններն օգտագործվեին ի նպաստ օրգանական կամ կենսաօրգանական ուղղվածությամբ գյուղատնտեսության զարգացման, երբ անօրգանական բնույթի սննդատարրերը փոխարինվում են տարբեր եղանակներով վերամշակված գոմաղբում և այլ թափոններում (կենսահումուս, մեթանային խմորման կոնվերտ, կոմպոստ) առկա բաղադրիչներով: Այս դեպքում հողը ոչ միայն հարստանում է անհրաժեշտ սննդատարրերով, այլ նաև հումուսի առաջացման համար անհրաժեշտ բակտերիալ կազմով: Այդպիսի հողերում աճող բույսերը գրեթե կարիք չունեն քիմիկատների միջամտության, իսկ աճեցրած բերքը որակվում է որպես էկոլոգիապես մաքուր և հեշտությամբ գտնում է իր տեղը շուկայում: Վերջին 10 տարիների ընթացքում մաս-

նակի հաջողությամբ փորձեր են արվել հանրապետությունում տարածել կենսահումուսի կուլտուրան: Առաջին քայլերն են արվում գյուղատնտեսության թափոններն (գոմաղբ, բուսական մնացորդներ) օգտագործել կենսազագ և բարձրարժեք կենսաօրգանական պարարտանյութ ստանալու ուղղությամբ: Կենդանիների գլխաքանակը երկրում այնպիսին է, որ ոչ միայն կապահովի բոլոր գյուղատնտեսական հողերը արժեքավոր կենսապարարտանյութով, այլև թույլ կտա արտահանել դրանից ստացված խտացված պատրաստուկներ:

Հայաստանն ունի ևս մի բնական ռեսուրս, որը հողի որակը բարելավող հիանալի կոմպոնենտ է: Խոսքը երկրի հյուսիսում և հյուսիս-արևմուտքում հայտնաբերված ցեոլիտների մեծ պաշարների մասին է: Դրանք բարելավում են հողի գազափոխանակությունը և ապահովում սննդանյութերի մուտքը բույսի մեջ փոքրիկ չափաբաժիններով, ինչը չի հանգեցնում սննդատարների կուտակմանը բույսում և դրանով նպաստում է բույսի աճի և արտադրողականության բարձրացմանը:

Հասկանալի է, որ մեկ հեկտարից էլ պակաս հողակտորների վրա գյուղատնտեսություն զարգանալ չի կարող և 336 000 գյուղացիական տնտեսությունը մեր ունեցած բնական ռեսուրսների համար՝ շատ մեծ թիվ է: Դրա փոքրացմանը կնպաստի ինչպես կոռպերացիան, այնպես էլ հողի շուկայի ակտիվացումը: Կոռպերացիայի նկատմամբ բացասական նախատրամադրվածությունը հաղթահարելու համար ճկուն պետական քաղաքականություն պետք է մշակել՝ գուցե վկայակոչելով կոմունիստական գաղափարներից շատ հեռու, բայց սոցիալական արժեքները շատ բարձր գնահատող կոմս Կրոպոտկինին ու լեդի Բալֆուրին և կոռպերացիայի նոր, իրավաբանական տեսակետից պարզ և հուսալի ձևեր առաջարկել գյուղացուն՝ հաշվի առնելով մարդկության փորձը այդ բնագավառում հին Եգիպտոսից և Միջագետքից մինչև ներկա ժամանակների իտալական գյուղատնտեսական կոռպերատիվները [4, 5]: Ինչ վերաբերում է հողի շուկայի ակտիվացմանը, դա, անշուշտ, պետք է դիտարկվի որպես բազմապլանային միջոցառում: Անհրաժեշտ է

ստեղծել հուսալի գործող հիպոթեզային համակարգ, և վերը նշված սոցիալական լարվածությունից խուսափելու համար մշակել հատուկ պետական ծրագիր:

Այն կարող է հիմնված լինել հետևյալ դիտարկումների վրա. ամեն մի հայ գյուղացի չէ, որ իրեն ֆերմեր է տեսնում, բայց ինչպես ցույց են տվել տարիների ընթացքում կատարած մեր հարցումները և զրույցները, գյուղացիների մեծ մասը, անգամ սեփականաշնորհված հողի վաճառքի դեպքում, չի պատրաստվում վաճառել տունը՝ տնամերձի հետ միասին, որոնք սկսում են ծառայել որպես ամառանոց և ամառանոցային տնտեսություն: Չունենալով համապատասխան գիտելիքներ և հմտություններ՝ քաղաքային ամառանոցատերերը իրենց ընտանիքներին ապահովում են թարմ և պահածոյացված մրգով և բանջարեղենով:

Միջինը 0.1 հա կազմող տնամերձը՝ հատկապես պետական հովանավորչությանը Ջոն Ջիվոնսի մոտեցումների պրոպագանդումով ու կիրառումով, ոչ միայն թարմ մրգով և բանջարեղենով կարող է ապահովել գյուղաբնակ ոչ ֆերմերի ընտանիքը, այլև դուրս գալ շուկա՝ արտադրանքի ավելցուկով [6]: Տնամերձի այդպիսի «ավելցուկները» ժամանակին կազմում էին խորհրդային շուկայի զգալի մասը՝ մրցակցելով կոլխոզ-սովխոզների արտադրանքի հետ: Այժմյան շուկայում էլ դրանք իրենց պատշաճ տեղն ունեն: Իսկ զինված լինելով ժամանակակից տեխնոլոգիաներով՝ գյուղացին տնամերձից կարող է ռեկորդային բերք ստանալ՝ մեղմելով անցումային շրջանին հատուկ և անխուսափելի ցնցումները:

Հողերի անարդյունավետ կառավարման այլ օրինակ մեզ մատուցում է Արարատյան հարթավայրը, ուր ցորենն իր զբաղեցրած տարածքներով առաջին մշակաբույսն է դարձել: Ցորենի տարածքները հարթավայրում սկսեցին ընդարձակվել 10-15 տարի առաջ, երբ իրացման և ուղղակի գոյատևելու խնդիր կար: Այդ միտումը չի դադարել և այժմ, բայց արդեն նվազագույն ֆինանսական և աշխատուժի ներդրման առաջնայնության պատճառաբանությամբ [7]: Սակայն նվազագույն ներդրումները բերում են և նվազագույն արդյունք: Հարթավայրային և նախալեռնային

շրջաններում մեկ հեկտարի վրա ցորեն մշակելը պահանջում է 30-35 մարդ-օր (հիմնականում տղամարդու մասնակցությամբ) և բերում է 100-150 հազար դրամ եկամուտ: Բանջարեղենի մշակումը պահանջում է 350-400 մարդ օր (հիմնականում կանանց մասնակցությամբ) և ապահովում մեկ կարգով ավելի եկամուտ՝ ֆինանսական ներդրումների համեմատելի լինելու պարագայում: Հաշվի առնելով հանրապետությունում տեղի ունեցած դեմոգրաֆիկ փոփոխությունները և ընտանիքի այժմյան կազմը՝ կանանց, ծերերի և անչափահասների գերակշռումով, անհրաժեշտ է դառնում մշակաբույսի ընտրության և ընտանիքի կազմի համապատասխանեցումը, ինչի վերաբերյալ կարող են բացատրական գործունեություն ծավալել գյուղացիության հետ աշխատող կազմակերպությունները:

Ոռոգման բարելավում: Անհապաղ պետք է բարելավվի ջրատարների վիճակը, հստակեցվի ջրի փոխադրման յուրաքանչյուր հատվածի պատասխանատուն: Գյուղացին պետք է ստանա ջուր և վճարի իր փաստացի ստացած ջրի համար. մի բան, որ այժմ տեղի չի ունենում:

Պետք է բարելավվի նաև ջրման տեխնիկան՝ առայժմ ավանդական ոռոգման տեխնիկայի արդիականացմամբ, ապա հետզհետե անցնելով կաթիլային ոռոգման համակարգի: Կառավարությունը պետք է գիտակցի, որ որքան շուտ միջոցներ գտնի դրա համար, այնքան շուտ կձեռքագատվի ծախսատար դրենաժային համակարգի սպասարկումից: Լինելով, իհարկե, ոչ պակաս ծախսատար՝ կաթիլային համակարգը ապահովում է բարձր բերք և տնտեսում տարածաշրջանում մեծ դեֆիցիտ համարվող ջուրը: Փորձագետների կարծիքով, Հայաստանը կարող է զգալի քանակություններով խմելու ջուր արտահանել, եթե վերանայի իր ջրօգտագործման հայեցակարգը: Վերջերս այդ ուղղությամբ որոշ քայլեր արվում են, մեծացվում և ամրացվում են բարձր լեռնային և նախալեռնային գոտու ջրամբարները: Դրանց գումարային տարողության համապատասխան մեծացումով միայն կարելի է այս-

օրվա օգտագործվող 2,5 մլրդ մ³-ից մոտենալ երկրի ջրային ռեսուրսների պոտենցիալ արժեքին, որն է 7,5 մլրդ մ³, և ոռոգել ավելի քան 200 հազար հա:

Ամենակարևորն է՝ ոռոգման համակարգի բարելավումը չի կարող տեղի ունենալ առանց լայն քննարկումների, որոնց ակտիվորեն պետք է մասնակցեն ֆերմերները, նրանց շահերը ներկայացնող կազմակերպությունները, տեղական կառավարման մարմինները:

Գիտակրթական համակարգ: Գյուղատնտեսական գիտության, կրթության, խորհրդատվության և վերապատրաստման արդյունավետ փոխհամագործակցության հաջողված մոդել է, մեր կարծիքով, ամերիկյան «Լենդ գրանտ» համալսարանային մոդելը: Այստեղ ոչ միայն գիտությունը և կրթությունն են ներդաշնակորեն ինտեգրված, այլև սերտորեն աշխատում են ֆերմերների հետ: Հատկապես ուշագրավ է, որ հիմնականում համալսարաններին կից գործում են սերմերի սերտիֆիկացման, կամ ջրի, հողի և գյուղատնտեսական մթերքի անալիզների լաբորատորիաները: Վերջիններս ոչ միայն սպասարկում են ֆերմերին, այլև բացահայտում իրավիճակը, հուշում ոչ միայն կիրառական, այլև ֆունդամենտալ գիտության ուղղությունները: Այսինքն՝ սպասարկելով ֆերմերին, նրանք պարզապես ծառայում են գիտակրթական համակարգին: Այդ պատճառով էլ ֆերմերը նշված սպասարկման համար միայն մի մասն է վճարում:

Նման համակարգի կիրառումը կստեղծեր այնպիսի միասնական ինտելեկտուալ դաշտ, որտեղ բոլոր գործընթացներին ակտիվորեն կմասնակցեր նաև ուսանողը՝ վաղվա դասախոսը, ֆերմերը, գիտնականը: Վաղուց արդեն անհրաժեշտություն է դարձել կրթական համակարգում ուսանողների կողմից ընտրվող առարկաների ցանկի ընդլայնումը, որը հնարավորություն կտա պահանջարկ չունեցող անդամ, ունիվերսալ մասնագետների փոխարեն պատրաստել նպատակային եզակի մասնագետներ՝ գյուղատնտեսության և նրա հետ առնչվող ցանկացած բնագավառի համար:

Այսօր գյուղատնտեսական ակադեմիայում նոր մասնագիտությունների՝ խորհրդատվության, համայնքների զարգացման և գյուղատնտեսության քաղաքականության ուսումնական ծրագրեր են մշակվում, փորձ է արվում նպաստավոր պայմաններ ստեղծել գյուղական վայրերի դիմորդների համար:

Վերամշակում: Վերամշակող համակարգը, վերը նշված թերություններով հանդերձ, հետզհետե զարգացում է ապրում: Ներդրողների համար այն գնալով ավելի հրապուրիչ է դառնում. հավանաբար, հաշվի են առնվում Հայաստանում աճող մրգի և բանջարեղենի բարձր որակը, անասնաբուժական արտադրանքի բարձր համային և էկոլոգիական հատկանիշները: Այն հանգամանքը, որ այս բնագավառում կատարված ներդրումների արդյունքում նորանոր ապրանքներ են դուրս եկել արտաքին շուկա, նոր ներդրողների է քաջալերում: Դա իր հերթին կհանգեցնի նոր վերամշակող ձեռնարկությունների գործարկմանը և ոչ լրիվ հզորությամբ աշխատողների լիարժեք բեռնվածությանը: Այս պարագաներում ոչ միայն կլուծվեն ֆերմերների համար այդքան կարևոր բերքի իրացման խնդիրը, այլ նաև էջ 40-ում հիշատակված ադեկվատ գներով ընդունման և ժամանակին վճարումներ կատարելու խնդիրները, քանի որ բավարար թվով մասնակիցների պարագայում բնագավառը կգործի առողջ մրցակցության պայմաններում: Արդեն այսօր կան ձեռնարկություններ, որոնք զարնանը ֆերմերին կանխավճար են տալիս (ճիշտ է, շատ անգամ ավագակային պայմաններով, բայց մրցակցության պահպանման և զարգացման պարագայում այդ խնդիրն էլ կլուծվի)՝ աշնանը նրանից ստացվելիք մթերքի դիմաց:

Հանրապետությունում արդեն մի քանի տարի է, ինչ գոյություն ունեն ֆերմերական կրեդիտ-ակումբներ, որոնք, գաղափարի տարածման դեպքում, ավելի կաշխուժացնեն այն մթնոլորտը, որում գործում են վերամշակող ձեռնարկությունները:

Այսպիսով, հայկական գյուղատնտեսական մթերքը կարող է հաջողությամբ շարունակել իր մուտքը արտաքին շուկա, հատկապես ժամանակակից վերամշակման և փաթեթավորման սարքավորումների առկայությամբ:

Կոոպերացիա, կենսաբազմազանության պահպանում, անտառների համատեղ օգտագործում: Որոշ խոչընդոտների վերացման համար կոոպերացիան հանդիսանում է միակ միջոցը, որոշների համար՝ հիմնականը, մյուսների համար՝ այս կամ այն չափով նպաստավոր: Կարելի է թվարկել գյուղատնտեսության բոլոր այն բնագավառները, որոնք զգալիորեն կշահեն կոոպերացիայից: Սակայն պարզ է նաև, որ առանց համապատասխան սոցիալական ակտիվության այդ հիրավի ունիվերսալ միջոցը կմնա չօգտագործված: Հայ գյուղացու սոցիալական ակտիվության ցածր աստիճանը, որն այսօր գնահատվում է որպես միջանկյալ՝ *passive* և *consultative*-ի միջև, հեռու է պահում նրան որոշումների ընդունման գործընթացից [8]:

Թե՛ կենսաբազմազանության պահպանման, թե՛ ընդհանրապես ազգային ռեսուրսների կառավարման և այլ էկոլոգիական միջոցառումների համար լավագույնը կոլեկտիվ գործողությունների ձևն է [9]:

Ինչպես նշվեց ներածությունում, բազմազանության կորուստը կանխելու նպատակով ուտելի բույսերը և դեղաբույսերը, որոնք հատկապես բարձր են գնահատվում և, հետևաբար, շատ են հավաքվում բնական վայրերից, անհրաժեշտ է աճեցնել գյուղացիական տնտեսություններում: Արդեն կան այդպիսի օրինակներ. դիցուք, ծնեբեկը, սիբեխն ու ավելուկը, իսկ դեղաբույսերից՝ մատուտակը, կատվալեզուն և առյուծագի հնգաբաժանը արդեն աճեցվում են ֆերմերային տնտեսություններում: Մնում է ավստոսալ, որ դա արվում է անհատների նախաձեռնությամբ, այլ ոչ թե պետական լայնածավալ ծրագրերի միջոցով, ասենք, *GEF*-ի աջակցությամբ և հովանավորությամբ:

Անտառային տարածքների գրեթե կրկնակի կրճատումը վերջին 15 տարիների ընթացքում պարտավորեցնում է իրավիճակը շտկելու հատուկ մոտեցումներ

դրսևորել: Անտառն իր բազմաբնույթ վիտալիստական իմաստով նաև տարածք է, որտեղ մարդը կարող է ծավալել հաշվենկատ գյուղատնտեսական գործունեություն: Գյուղատնտեսական կենդանիներին անտառային տարածքներում պահելը հնարավորություն է տալիս ոչ միայն մասամբ լուծել նրանց կերի և հողի պարարտացման հարցը, այլև նրանց միջոցով արահետային ցանց ստեղծելով՝ կանխել հնարավոր հրդեհների տարածումը:

Անտառների վարձակալման պրակտիկան հայտնի է շատ երկրներում: Հայաստանում այն կարող է դրսևորվել ոչ ավանդական ձևով՝ հաշվի առնելով երկրի, մեղմ ասած, առանձնահատկությունները, այն է՝ անտառային ռեսուրսի քրեորեն պատժելի ղեկավարումը կոռումպացված չինովնիկության հետ մեկտեղ: Առաջարկվում է անտառների վարձակալումը կատարել համայնքի կողմից, որը կպարտավորվի խնամել անտառը, կատարել սանիտարական հատումներ և ծառաբազմացման աշխատանքներ՝ մասնագիտացված ատյանների հետ կնքած պայմանագրի համաձայն: Վերջիններս էլ ըստ պայմանագրի կատարում են տարածքի մոնիտորինգը: Վերահսկման և գրագետ անտառօգտագործման պատասխանատվությունը կրում է ողջ համայնքը, ինչը կբացառի առանձին անձանց կողմից կատարվող չարաշահումները, այն, ինչ մենք տեսնում ենք այսօր ամենուրեք նշված բնագավառում:

Վնասատուների և հիվանդությունների դեմ ինտեգրված պայքար (ՎՀԻՊ), օրգանական գյուղատնտեսություն, ագրոտուրիզմ: ՎՀԻՊ-ի գաղափարը միանգամայն պարզ է և ընդունելի. այն ենթադրում է միջոցառումների այնպիսի համատեղություն, երբ առողջ սերմը հասցվում է պարարտ, մոլախոտերից, հիվանդություններից և վնասատուներից նախապես ազատված հողին, և բույսն աճեցվում է այնպիսի ագրոտեխնիկական պայմաններում, որ քիմիկատներով միջամտությունը հասցվի նվազագույնի: Հայաստանում դրա իրագործման բոլոր պայմանները, ինչպես նաև մասնագետներն առկա են: Խնդիրն այստեղ սերմերի աղքատ շուկան

է և ֆերմերների կոնսերվատիզմը, որոնք չնայած նախագգուշացումներին, օգտագործում են հնացած և ժամկետանց, բայց իրենց ծանոթ ախտահանիչներ, որոնք արդյունավետ չլինելուց բացի, չեն համապատասխանում էկոլոգիական անվտանգության պայմաններին:

Ավանդական գյուղատնտեսությունից բացի՝ շատ երկրներում զարգանում է այլընտրանքային գյուղատնտեսությունը, որն ունի տարբեր ուղղություններ և անվանումներ. օրգանական, օրգանակենսաբանական, բիոդինամիկ, «բնությանը մոտ» և այլն: Թվարկածներից բիոդինամիկն է, որ տարբերվում է մյուսներից ավելի վաղ հայտնի լինելով և ավելի խիստ մոտեցումներով: Մյուսները բավական նման են իրար և հիմնված են ընդհանուր խնդրի վրա. նվազագույնի հասցնել արտաքին անթրոպոգեն ազդեցությունը ագրոէկոհամակարգի վրա և առավել բարենպաստ պայմաններ ստեղծել նրա սեփական պոտենցիալը լիարժեք օգտագործելու համար:

Բանն այն է, որ բնական ցենոզները (համակեցությունները), բնութագրվելով հազարամյակների ընթացքում կայացած բույսերի և այլ կենդանի օրգանիզմների բազմազանությամբ, ունեն նաև այդ բազմազանությունը պահպանելու բազմաստիճան հզոր համակարգ՝ պայմանավորված խիստ որոշակի միջատային կազմով, նրանց էնտոմոֆագերով, համապատասխան միկրոֆլորայով: Մարդը, որն իր կամքը թելադրելով այդպիսի բարդ համակարգերին, մոնոկուլտուրա է մշակում, իր սխալը կոծկելու համար անընդհատ կոշտացնում է մոտեցումը արհեստածին միացություններով՝ կարծես փորձելով վերջնականապես խաթարել բնության ներդաշնակությունը: Իրականում խնդրի լուծումը մոտեցումը մեղմելու մեջ է: Ասել է թե՛ ագրոցենոզները պետք է հնարավորին չափ մոտեցնել բնական ցենոզներին:

Այլընտրանքային մոտեցումներից առավել տարածվածը «օրգանական գյուղատնտեսություն» անվանումն է, մեզ ավելի գերադասելի է թվում «բնությանը մոտ» տարբերակը՝ իր ավելի բնապահպանական և էկոլոգիական ընդգծվածության համար: Իրականում դրանց տարբերությունը մեծ չէ, և երկուսի նպատակն էլ հողի

բերրիության բարձրացումն ու պահպանումն է՝ հիմնականում հողային միկրոֆլորայի ակտիվացման հաշվին, շրջակա միջավայրի պաշտպանությունը, ագրոէկոհամակարգերում նյութերի շրջանառության ակտիվացումը և, ի վերջո, բարձրորակ գյուղատնտեսական ապրանքի արտադրությունը: Այս պարագայում բացառվում կամ էապես կրճատվում է հանքային պարարտանյութերի օգտագործումը, որոնց փոխարինում են օրգանականները կամ կենսաօրգանականները, բացառվում է հերբիցիդների և պեստիցիդների օգտագործումը, վնասատուներից և հիվանդություններից պաշտպանվում են էնտոմոֆագերի բազմացման, կենսապատրաստուկների, ֆերոմոնային թակարդների կիրառման միջոցով: Շատ անգամ խնդիրը կարելի է լուծել՝ մշակվող բույսի մոտերքում անհրաժեշտ ազդեցություն ունեցող բույս աճեցնելով:

Ագրոտուրիզմն այսօր Հայաստանում, կարելի է ասել, դեռ գոյություն չունի, բայց կան արդեն դրա երեք նախադրյալները.

- Հայաստանն իր կլիմայով, բնությամբ և պատմամշակութային հարուստ ժառանգությամբ ինքնին ավանդական տուրիստական երկիր է,
- բնակչության գրեթե կեսը զբաղված է գյուղատնտեսության մեջ, ուստի ագրոտուրիզմի զարգացմանն ուղղված ներդրումներն ունեն ընդարձակ և հեռանկարային բնագավառ,
- տարբեր տարածաշրջաններում կատարված հարցումները ցույց են տալիս, որ ֆերմերները շատ դրական են տրամադրված նման գործընթացի նկատմամբ:

Վերլուծելով իրավիճակը և հաշվի առնելով որոշ առանձնահատկություններ՝ առաջարկվում է Հայաստանի ագրոտուրիզմի մոդել՝ արտաքին և ներքին տարբերակներով:

Արտաքին տարբերակ: Զբոսաշրջիկները հիմնականում գալիս են դրսից, դրանց մեծ մասը գյուղատնտեսության մասնագետներ են, որոնց հետաքրքրում են

Հայաստանում գյուղատնտեսության վարման առանձնահատկությունները: Հաստատվում են «Ֆերմերը՝ ֆերմերին» երկկողմանի հարաբերություններ:

Ներքին տարբերակ: Այս տարբերակում ներգրավվում են մի կողմից ոչ այնքան հարմարավետ կացարան և լրացուցիչ աշխատուժի կարիք ունեցող գյուղացին, մյուս կողմից՝ այն քաղաքաբնակները, որոնք հնարավորություն չունենալով այլ երկրներում կազմակերպելու իրենց և իրենց ընտանիքների հանգիստը, իրականացնում են այն հայրենի բնության գրկում՝ օգտվելով թարմ գյուղատնտեսական մթերքից: Վճարումը կարող է լինել դրամով կամ պայմանավորվածությամբ՝ որևէ նախընտրելի գյուղատնտեսական աշխատանք կատարելով: Երեխաները այս պարագայում ստանում են պատշաճ աշխատանքային դաստիարակություն և առնչվում գյուղատնտեսությանը և բնությանը:

Վերականգնվող էներգետիկայի հնարավորությունները: Չունենալով օրգանական վառելանյութի սեփական աղբյուրներ՝ Հայաստանը կախման մեջ է ներկրվող էներգակիրներից: Արտադրվող էլեկտրաէներգիայի միայն 20%-ն է ստացվում սեփական էներգառեսուրսներից՝ հիդրոէլեկտրակայաններում: Մնացածը՝ ներկրվող էներգակիրներից, 45% ջերմակայաններում և 35% ատոմակայանում:

Այնուամենայնիվ, Հայաստանն ունի վերականգնվող էներգիայի բավականին մեծ ռեսուրսներ: Դրանք առաջին հերթին հիդրոռեսուրսներն են, որոնց պոտենցիալը կազմում է 3.2 մլրդ կիլովատ/ժամ, որից այսօր յուրացվում է 1.5 մլրդ: Կան հողմաէներգետիկայի զգալի ռեսուրսներ, որոնց տեսական պոտենցիալը գնահատվում է ավելի քան 10 գիգավատ/ժամ, իսկ դրա տասներորդ մասը համարվում է տեխնիկապես մատչելի:

Մեծ է արևային էներգիայի պոտենցիալը՝ 1700-1800 կիլովատ/ժամ մեկ քառակուսի մետրին (միջին եվրոպականը կազմում է 1000):

Կենսազանգվածի օգտագործումը Հայաստանում անում է առաջին քայլերը: Կան մի քանի անձնական օգտագործման փոքր կայաններ, բանակցություններ են

վարվում արտաքին ներդրողների հետ օրական 8 000 մ³ մեթան արտադրող կայանի կառուցման վերաբերյալ: Համապատասխան միջոցների առկայության դեպքում մոտակա 10-15 տարիներին հնարավոր է օրական մեթանի արտադրությունը հասցնել մինչև 100 000 մ³-ի: Հանրապետությունում գոյություն ունեցող անասնա-գլխաքանակը՝ գյուղատնտեսական այլ թափոնների հետ միասին, կենցաղային աղբի և կոյուղու անգամ մասնակի վերամշակումը հնարավորություն կտան գրեթե լրիվ բավարարելու ջերմային էներգիայի պահանջը:

Հայաստանի համար վերականգնվող էներգետիկայի զարգացումը ռազմավարական և կարևոր բնապահպանական խնդիր է:

Հետագա աղակալման կանխումը և աղուտների օգտագործումը: Ինչպես և ամբողջ աշխարհում, Հայաստանի հողերին էլ սպառնում է աղակալման, իսկ այն չկանխելու դեպքում՝ նաև անապատացման վտանգ: Հանրապետությունն ունի 5 000 հա առաջնային աղակալման հողեր, ինչը պայմանավորված է հողերի կազմով ու կառուցվածքով, և երկրորդային աղակալման 25 000 հա հողեր, որոնք առաջացել են սխալ շահագործման կամ ոչ պատշաճ ագրոտեխնիկայի կիրառման հետևանքով: Խնդիրը ոչ միայն այն է, որ երկիրն առանց այն էլ սակավահող է, այլ որ այդ հողերը գտնվում են գյուղատնտեսության վարման համար ամենաբարենպաստ գոտում՝ Արարատյան հարթավայրում, ուր կա և՛ ռոտզման ջուր, և՛ ավելի քան բավարար ինսուլյացիա՝ մեկ սեզոնի ընթացքում մի քանի բերք ստանալու համար. զբաղեցնելով գյուղատնտեսական նպատակներով օգտագործվող հողերի ընդամենը 13%-ը՝ հարթավայրը տալիս է համախառն գյուղատնտեսական արտադրանքի ավելի քան 40%-ը:

Միջոցառումները, որոնք կարող են կանխել հետագա աղակալումը և դարձնել արդեն աղակալած հողերը օգտագործելի, հետևյալն են.

- մակերեսային ջրերի խորացում դրենաժային համակարգի միջոցով,

- տրանսպիրացիայի նվազեցում ջրախնա տեխնոլոգիաների կիրառման և դաշտապաշտպան անտառաշերտերի կառուցման միջոցով,
- հալոֆիտ և աղադիմացկուն բուսատեսակներ մշակելու և ճիշտ ցանքաշրջանառություն կատարելու միջոցով:

Հատկապես առաջին երկու միջոցառումները ենթադրում են ամբողջական համայնքների և անգամ համայնքների համագործակցության արդյունքում որոշումների կայացման և իրագործման գործընթաց՝ համայնքների անդամների ակտիվ մասնակցությամբ:

Եզրակացություն

Հողի շուտափույթ սեփականաշնորհումը Հայաստանում հանգեցրեց նրան, որ գյուղատնտեսության նախկին ենթակառուցվածքները քանդվեցին, իսկ նորերը, որ պետք է օգնեին գյուղացուն կողմնորոշվել իրեն անձանոթ հասարակական տիրույթում՝ չձևավորվեցին: Արդյունքը եղավ այն, որ միևնույն ագրոէկոլոգիական պայմաններում այսօր աճեցվում է 2-3 անգամ պակաս բերք, ինչը չի կարող չհանգեցնել զգալի սոցիալական լարվածության:

Սովորաբար պետությունները ներդրումներ են կատարում գյուղատնտեսության բնագավառում սեփական անվտանգությունն ապահովելու համար: Եվ քանի որ ներդրումներ է կատարում, ամեն ինչ անում է, որ եկամուտ է ունենա, կամ եթե վնաս է կրելու՝ այն մեծ չլինի: Մեր գյուղատնտեսության մեջ ներդրումներ չեն արվում, դրա համար շահագրգռվածություն էլ առանձնապես չկա. չներդրված գումարը չի կարող վերադարձվել:

Ներդրումներն առաջին հերթին պետք են ապահովագրական և վարկային համակարգեր ստեղծելու համար, քանի որ բնակլիմայական պայմանները դարձնում են Հայաստանը գյուղատնտեսության համար ռիսկային գոտի: Վարկերն այսօր տրվում են ամենացածրը տարեկան 15-24 տոկոսով, այն էլ գրավային անբարե-

նպաստ պայմաններով: Բանկիրը պետք է համոզվի, որ բարձր վարկային տոկոսը չի լուծում չվերադարձելիության խնդիրը, իսկ պետությունը՝ որ գյուղացին հուսալի գործընկեր է, և եթե նրան օգնես գարնանը, աշնանը նա այդ մասին չի մոռանա:

Գյուղատնտեսությունը յուրահատուկ է իր բազմագործոնությամբ, և զարգացումը այդ կարևոր կենսական բնագավառում պայմանավորված է ոչ միայն (իսկ երբեմն էլ ոչ այնքան) ֆինանսական և ֆիզիկական կապիտալներով, այլև մարդկային, բնական և սոցիալական կապիտալների համատեղ ներագդումով, որոնք ներառում են.

- մարդկային կապիտալ - անձի կարգավիճակ, որն իր հերթին ներառում է նրա առողջությունը, սնունդը, արհեստավարժությունը, գիտելիքները, ուսուցումը, ենթարկվելու և առաջնորդելու կարողությունները,
- բնական կապիտալ - բնական մթերքը և ռեսուրսը՝ աճեցված և վայրի, ջուրը, թափոնները և դրանց մշակումը, հողը, կենդանի էակները, կլիմայի կարգավորումը, քիմիկատների վերահսկումը, շրջակա միջավայրը, բնությունից ճիշտ օգտվելը,
- սոցիալական կապիտալ - դա մարդկանց միմյանց կապող ուժն է հասարակության մեջ, հավատը՝ մեկը մյուսի նկատմամբ, կոոպերացիայի հետևանքով առաջացող փոխադարձ ուժեղացումը, համայնքի մեջ գոյություն ունեցող կանոնների, նորմերի և հարկ եղած դեպքում՝ սանկցիաների փոխադարձ համաձայնեցումը, ֆորմալ և ոչ ֆորմալ խմբերը և նրանց համագործակցությունը ինչպես համայնքում, այնպես էլ համայնքից դուրս:

Գյուղատնտեսությունը՝ որպես տնտեսության ճյուղ և կյանքի բնագավառ, ունի օբյեկտիվ անկատարություն. այն ցրված է տարածության և խտացված՝ ժամանակի մեջ: Գյուղատնտեսության մեկ ուրիշ առանձնահատկությանը՝ բարոյականությանը, դեռ 2200 տարի առաջ անդրադարձել է Կատոնը՝ սկսելով իր երկրագործության մասին աշխատությունը տարբեր զբաղմունքի մարդկանց համեմատա-

կան վերլուծությունով և գտնելով, որ «ամենամաքուրը, ազնիվը, հավատարիմը նրանցից, բայց և ամենաքիչ եկամուտ ստացողը» գյուղատնտեսությամբ զբաղվողն է [10]:

Մոտ 10 տարի առաջ գյուղացիների համար մեկնարկած խորհրդատվությունն ու ուսուցումը հազիվ թե 10%-ով նպատակին հասած կարելի է համարել: Բավական միջոցներ և ջանքեր են ներդրվել, որոնք, անշուշտ, ավելի շոշափելի արդյունք պետք է ապահովեին: Բայց մենք ունենք այն, ինչ ունենք: Իսկ այն, ինչ ունենք, պայմանավորված է իսկ և իսկ այդչափ սոցիալական կապիտալի ներդրումով: Վերջինս չափազանց կարևոր և անհրաժեշտ գործոն է ոչ միայն գյուղատնտեսության, այլև հասարակության զարգացման համար (հատկապես ստագնացիայի հասած Հայաստանի գյուղատնտեսության և հասարակության համար), իր կառուցողական արժեքներով. հավատի վրա հիմնված հարաբերություններ, փոխադարձություն և փոխկապակցվածություն առանձին մարդկանց և նրանց խմբերի միջև, կանոնների և նորմերի պահպանում [11]:

Ուղղահայաց հարաբերություններին սովոր գյուղացին (և ոչ միայն նա), ապավինելով այդ արժեքներին, ոչ միայն հնարավորություն կունենա զարգացած գյուղատնտեսություն կայացնելու, այլև հասարակությունն առողջացնելու կարևոր օրինակ ցույց կտա: Կայուն զարգացող գյուղատնտեսության կառուցումը համատեղ ջանքերով հնարավոր է միայն մասնակցային սկզբունքով, այլ ոչ թե գոյություն չունեցող նախարարության հրահանգներով: Հորիզոնական կապերով միմյանց հարաբերվելը արդյունավետ է նաև այն առումով, որ վերահսկելու միջոց ու ժամանակ է տնտեսում: Իսկ դրան հասնելու համար բնագավառում գործող պետական կառույցները պետք է հիմնեն անկախ փորձագետների կարգավիճակ և սերտորեն համագործակցեն նրանց և այլ հասարակական կառույցների հետ:

Թերևս այսօր Հայաստանում կա մի լուրջ արգելք, որը չվերացնելու դեպքում կվտանգվի նշված արժեքների միջոցով բարելավված էկոնոմիկայի և սոցիալական

բարեկեցության կառուցումը: Սոցիալական կապիտալը, որի տարրերն են ազատ ստեղծագործող անձը և ամուր ընտանիքը, Հայաստանում պարունակում է նաև իշխանություններին մոտ գտնվող քրեածին դեստրուկտիվ խմբեր, որոնք, ինչպես և Լատինական Ամերիկայի որոշ երկրներում, զգալի ազդեցություն ունենալով հասարակական կյանքի վրա՝ խոչընդոտում են դրական սոցիալական պատկերի կառուցումը [12]:

Քանի որ մշակված ագրարային քաղաքականությունը առաջին հերթին գործողությունների ծրագիր է, գործնականում իրականացվող նպատակային ընթացիկ ծրագրերը, հատկապես մշակված լինելով իրագործողների մասնակցությամբ, մաս են կազմում ազգային ագրարային քաղաքականության [13]: Առանձին ծրագրեր են մշակվում, թե ամբողջական ազգային քաղաքականություն՝ հաջողությունը ուղիղ համեմատական կլինի ողջ գյուղատնտեսական ֆորումի մասնակցության չափին:

Աղբյուրներ և գրականություն

1. *В.Ц.Айказян. Питание растений. Некоторые биохимические принципы оптимизации. Сообщения ИАПГ НАН, 1995, # 26, 58-67.*
2. *Ա.Պ.Ղանդիլյան, Ա.Մ.Բարսեղյան, Հայաստանի վայրի ուտելի և համեմունքային բանջարաբույսերի գենոֆոնդը: «Ամարաս», Երևան, 1999թ.:*
3. *V.Ts. Haykazyan, J.N. Pretty. Armenian Agriculture Today and Tomorrow. CES Occasional Paper, University of Essex, UK, in press.*
4. *P.A. Kropotkin. Mutual Aid. 1902. Cited by Extending Horison Books, Boston, 1955.*
5. *E.B. Balfour. The Living Soil. Faber and Faber, London, 1943.*
6. *John Jeavons. How to Grow More...Ten Speed Press, Berkely, California. 1995.*
7. *В.Ц.Айказян, В.О.Мирзаханян. Аутентизация структуры посевов с имеющейся демографической картиной и составом семьи. Материалы XIII международного*

- симпозиума «Нетрадиционное растениеводство. Эниология. Экология и здоровье». 2004. Книга I, с. 146-148.
8. *Jules Pretty* (Ed.) Guide to a Green Planet. University of Essex, UK, 2002.
9. *Jules Pretty*. Agri-Culture: Reconnecting People, Land and Nature. EARTHSCAN, London-Sterling, VA, USA, 2002.
10. *Марк Порций Катон*. Земледелие. Изд. АН СССР, М-Л, 1950, с.7.
11. *J.N. Pretty*. Social Capital and the Collective Management of Resources. Science. 2003, v 302, 1912-1914.
12. *Աղասի Թադևոսյան*. Հայաստանում արժեքային կողմնորոշումների ազդեցությունը հանրային կապիտալի ձևավորման գործընթացին: «21-րդ դար», 2004 թ., #2, էջ 30-51:
13. *Jules Pretty*. Agroecology in Developing Countries: The promise of a Sustainable Harvest. Environment, 2003, v 45, #9, p. 8-20.